ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 դեկտեմբերի 2017 թվականի N 291-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Համաձայն «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի, Հայասատնի Հանրապետության նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի N ՆՀ-728 հրամանագրի 1.16-րդ կետի «ա» ենթակետի պահանջների, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության աշխատակազմի ֆինանսաբյուջետային վերահսկողության տեսչության 2017 թվականի հունիսի 19-ի N 23-Ա ակտի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2017 թվականի մայիսի 6-ի N 89-Ա, 2017 թվականի հունիսի 6-ի N 117-Ա որոշումներով ստեղծված աշխատանքային խմբի ուսումնասիրության արդյունքները՝ **որոշում եմ.**

1. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ *Լադիկ Նահապետյանին.*

1) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Հրազդանի Վիլյամ Սարոյանի անվան N 11 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ներառական կրթության ծրագրում ընդգրկված երեխաներին սնունդ և տրանսպորտի գումարների վերահաշվարկման արդյունքում ***1518900*** *(մեկ միլիոն հինգ հարյուր տասնութ հազար ինը հարյուր)* ՀՀ դրամը ենթակա է վերականգնման Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

2) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Արովյանի N 7 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ներառական կրթության ծրագրում ընդգրկված երեխաներին սնունդ և տրանսպորտի գումարների վերահաշվարկման արդյունքում ***1040500*** *(մեկ միլիոն քառասուն հազար հինգ հարյուր)* ՀՀ դրամը ենթակա է վերականգնման Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ. ԳՈՒԼՈՅԱՆ

2017 թվականի դեկտեմբերի 14
ք. Հրազդան